ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091435136, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.05.2016թ.
284-ի 8

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
պարոն Հարություն Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան սեփականության տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ (ուժի մեջ է մտել ս/թ հունվարի 1-ից) տեղեկատվության ազատության ոլորտում նոր պարտավորություններ են սահմանվել տեղեկատվություն տնօրինողների համար:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել

1. Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացվա՞ծ են արդյոք տեղեկություն ստանալու հարցումները, դրանք գրանցվո՞ւմ են արդյոք քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:
2. Խնդրում ենք տրամադրել Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության գործող կարգը՝ տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման,ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 2652
18. 05. 2016թ.